Վ. Կ. ՈՍԿԱՆՅԱՆ

ԹՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հեռավոր անցյալում աշխարհի տարբեր մասերում ստեղծվեցին հայ գաղթ-օջախներ՝ որպես հետևանք Հայաստանի տնտեսական, քաղաքական ու կուլ-տուրական կյանքի յուրօրինակ պայմանների։ Վաղ միջնադարի հայկական վաճառաշահ քաղաքների առևտրական խավերը ուղիներ էին որոնում սեփ-ական և հարևան երկրների արտադրության առարկաները շուկա հանելու համար՝ շտար հեռաստաններում ստեղծելով իրենց առևտրական տները, բնակություն հաստատելով այնտեղ, որտեղ կարելի էր իրացնել Արևելքի գյուղացիների, արհեստավորների արտադրանքը, ձեռք բերելով Մերձավոր արևելքի համար անհրաժեշտ ապրանքներ։ Հայ թագավորների և իշխանների զորքերը տարբեր պայմանների բերումով հանգես էին գալիս այլ երկրներում, մասնակցում պատերազմների ու արշավանքների, երբեմն մնում, բնակություն հաստատում այնտեղ։ Ստեղծված գաղթօջախները հանգրվան էին դառնում վաճառական-ների, պանդուխտների, օտար հորիզոններում ապրուստի միջոց ու բախտ որոնողների նորանոր խմբերի համար։ Գաղթօջախները, սակայն, առանձնա-պես աճում և մեծանում էին օտար նվաճողների ասպատակությունների և ավե-րիչ պատերազմների ժամանակ, երբ տեղի էր ունենում բնակչության զանգ-վածային փախուստ կամ բռնի արտագաղթ։

Հայկական գաղթավայրերի պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի մասն է, այլ ժողովուրդների հետ նրա պատմական կապերի ու բարեկամության բազմադարյան տարեգրությունը։ Բացելով այդ պատմության էջերը, մենք ծանոթանում ենք մեր մոտ ու հեռու հարևանների պատմությա-նը, մեր կյանքում նրանց կատարած դերին։ Հյուրընկալող ժողովուրդների օգ-նությամբ գաղութահայությունը կարողացավ ոչ միայն պահպանել իր ֆիզի-կական գոյությունն ու պատիվը, այլև զարգացնել ու հարստացնել ազգային մշակույթը այնպիսի մռայլ ժամանակներում, երբ հայրենիքում տիրում էր բարբարոս նվաճողների բռնապետությունը, երբ օրենքին փոխարինել էր կա-մայականությունը, երբ կործանվում էին երբեմնի բարձր մշակույթի հուշար-ձանները, աստիճանաբար արտաքսվում, ոչնչացվում, կամ ապազգայնացվում էր ժողովուրդը։ Ուստի հասկանալի է այն մեծ ու խրախուսելի ուշադրությու-նը, որը այժմ ցուցաբերվում է հայկական գաղթօջախների պատմության նկատմամբ[1]։

---

1 *Վերջերս հրատարակվել են մի շարք ուսումնասիրություններ, պաշտպանվել դիսերտա-ցիաներ։ Դրանցից պետք է նշել Ա. Գ. Աբրահամյանի, Վ. Ա. Միքայելյանի, Ս. Գասպարյանի, Վ. Գրիգորյանի, Պ. Կոկինոսի գրքերը, Հայաստանի և Ուկրաինայի պատմաբանների համատեղ սեսիաների զեկուցումները, որոնք հրատարակվել են* «Исторические связи и дружба украин-ского и армянского народов» *ժողովածուներում (1961 և 1965 թթ.)։*

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում հին Ռուսիայի, Ուկրաինայի և Ռուսաստանի հայ գաղթավայրերը՝ մասնավորապես, Աստրախանի, Մոսկվայի, Պետերբուրգի և Նոր Նախիջևանի գաղութները, որոնք նշանակալի դեր են կատարել ինչպես տնտեսական ու կուլտուրական, այնպես և քաղաքական կյանքի ոլորտներում։

* * *

Հայերի կապերը հյուսիսի և մասնավորապես մերձվոլգյան երկրների հետ հաստատվել են դեռևս վաղ միջնադարում։ Աղբյուրների վկայությամբ, Իթիլ (Վոլգա) գետը և խազարների մայրաքաղաք Իթիլը հայտնի են եղել հայ վաճառականներին, որոնք ջրային ճանապարհով բարձրանում էին դեպի հյուսիս՝ սլավոնների, հին Ռուսիայի և բուլղարների երկիրը, ապա դեպի Աղով, Դոն, Ղրիմ, Դնեպր, դեպի Միջին Ասիա։

Ինչպես նշում է ակադեմիկոս Հ. Մանանդյանը, «արաբական աղբյուրների մի շարք վկայություններից պարզ երևում է, որ Անդրկովկասի հյուսիսային առևտուրը, որ սկսվել էր 8-րդ դարում, առավել զարգացման հասավ 9—10-րդ դդ.[2]։ Ա. Յակուբովսկին գտնում է, որ «Վոլգյան մայրուղին վաղուց ի վեր կապում էր Կովկասը Արևելյան Եվրոպայի և Միջին Ասիայի հետ»[3]։ Այսպես, Վոլգայի հռչակավոր դելտան իր Իթիլ քաղաքով Հյուսիսի լայն բացված դարբասն էր, ուր մուտք էին գործում հայ, արաբ և արևելցի այլ վաճառականներ, շփվում էին ռուս, բուլղար, խազար բնակիչների հետ։ Իսկ ռուս վաճառականները, ինչպես վկայում է XI դ. արաբական գրող Խորդադբեն, Դոնով և Վոլգայով իջնում էին Իթիլ, վճարում տասնորդ ու նավարկում Կասպից ծովով, ապա ուղտերով իրենց ապրանքները տանում մինչև Բաղդադ[4]։ Վոլգյան ճանապարհով Իթիլ էին գնում ոչ միայն Հայաստանի, Վրաստանի ու Աղվանքի, այլև Կիլիկիայի հայերը[5], անցնելով մեծ գետի միջին հոսանքը, դեպի բուլղարների մայրաքաղաքը՝ Մեծ Բուլգար։ Ինչպես պարզել են գիտնականները, այնտեղ ստեղծվել և դարերով իր գոյությունը պահպանել է հայկական գաղութը, որի վկայությունն են նյութական կուլտուրայի հուշարձանները։ Դեռևս Կարամզինը և Ս. Գլինկան հիշատակել են այն փաստը, որ Պետրոս 1-ին կայսրը կարգադրել էր 1712 թ. ատենագրիր (դյակ) Միխայլովի նկարագրած և Մեծ Բուլգարի շրջանում գտնված հայ տապանաքարերի արձանագրությունները վերծանել, որի համար 1722 թ. Կաղան էր ուղարկվել հայազգի Իվան Վասիլևը[6]։ Գիտնականներ Ս. Մ. Շպիլևսկու, Վ. Ֆ. Սմոլինի, Յու. Վ. Գոտիեի ուսումնասիրությունները XIX—XX դդ. և հատկապես պրոֆ. Ս. Պ. Սմիրնովի կատարած պեղումներն ու հետազոտությունները պարզեցին հայկական նշանակալի գաղութի գոյության փաստը[7]։

---

[2] Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 199—200։

[3] Л. Ю. Якубовский, Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой в X—XV вв., Труды Института востоковедения, т. VI, ч. I, էջ 11։

[4] В. О. Ключевский, Курс русской истории, ч. I, Петроград, 1918, էջ 147—148։

[5] Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 368։

[6] С. Глинка, Обозрение истории Армении, т. II, Москва, 1832, էջ 231։

[7] А. П. Смирнов, Волжские булгары, Москва, 1951.

Սմիրնովը և նրա նախորդները հայտնաբերել են XII—XIII դարերի հարյուրավոր գերեզմաններ ու տապանաքարեր, որոնց մի մասը հայկական է և կապված Կազանից մոտ 90 կմ. հեռավորության վրա գտնված երբեմնի զարգացած արհեստներով ու առևտրով հայտնի Մեծ Բուլղար քաղաքի պատմության հետ։ Այդ տապանաքարերից հնագույնները վերաբերում են XII դարին, և դրանցից մեկը բերված ու դրված է Կազանի համալսարանի շքամուտքի մոտ[8]։ Հայկական տապանաքարերից հնագույնը (1121 թ.) գտնված է «Հունական պալատի» մոտ։ Գերեզմանների պեղումները, տապանաքարերի և այսպես կոչված Հունական պալատի ուսումնասիրությունները պրոֆ. Սմիրնովին բերել են այն եզրակացությանը, որ Մեծ Բուլգարում եղել է հայկական գաղութ, որն ունեցել է իր եկեղեցին, և որ «Հունական պալատը» հանդիսացել է հենց հայկական սրբատեղին[9]։

XIII—XIV դդ. թաթարական տիրապետության ժամանակաշրջանում Իթիլն ու Մեծ Բուլղարը կորցնում են իրենց նշանակությունը և հայերի, ռուսների ու աշխարհի երեք ցամաքների մյուս ժողովուրդների հանդիպման ու ապրանքափոխանակության կենտրոն է դառնում Ոսկե Հորդայի մայրաքաղաք Սարայը (որը հիմնադրվել էր Բաթու խանի օրոք 1240-ական թվականներին), ապա Նոր Սարայը՝ Սարայ-Բերկեն, որը կառուցվել էր Բերկե խանի օրոք (1257— 1266 թթ.)։

Սարայ-Բերկեն XIV դարում ուներ 200 հազարից ավելի բնակիչ և խոշոր արհեստա-առևտրական կենտրոն էր։ Այնտեղ բնակվում էին Կովկասի ժողովուրդների բազմաթիվ ներկայացուցիչներ, այդ թվում նաև հայեր, որոնց Լենկթեմուրը տարել էր իր մայրաքաղաքը՝ Սամարկանդ[10]։ Ոսկե Հորդայի մայրաքաղաքում լինում էին ոչ միայն հայ վաճառականներ, այլև իշխաններ (Սմբատ սպարապետը, Խաչենի Հասան Ջալալ իշխանը և ուրիշներ)։ Ղարսի և Դերբենտի վրայով Սարայ էր գնում Հեթումը[11]։ Այս բոլորը հիմք են տալիս ենթադրելու, որ վոլգյան շրջաններում հայերը մշտական այցելուներ էին և շատերն այնտեղ անգամ բնակություն էին հաստատել։ XIII դարի վերջերին հավանաբար հայերի մասսայական տեղաշարժ է եղել դեպի Վոլգա, Ախսարայ, որտեղ նրանք ապրել են տասնյակ տարիներ։ XIV դարի 30-ական թվականներին Ախսարայից հազարավոր հայեր անցան Ղրիմ[12]։ Ուշագրավ է 1319 թ. Սարայում գրված մի հիշատակարան, որի հեղինակը գանգատվում է գրչի համար անբարենպաստ ցրտաշունչ եղանակից[13]։ «Մեծ և հզօր գետն Իթիլ և ընդ հովանեաւ սուրբ Աստվածածնին և Կենակիր սուրբ նշանին»։ Իթիլ էր կոչվում Վոլգայի գետաբերանի առաջին քաղաքը, որը, Շտիլկոյի արտահայտությամբ,

---

8 Տե՛ս Վ. Ոսկանյան և Վ. Գրիգորյան, Հայկական գաղթավայրերում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1956, № 9, էջ 124։

9 А. П. Смирнов, նշված աշխատությունը, էջ 185—195։

10 Р. Клавихо, Дневник путешествия ко двору Тимура в Самарканде в 1403—1406, СПб, էջ 227։

11 Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, էջ 301—305, 344, 350։ Տե՛ս նաև Ջամչյան, հատոր Գ, էջ 222, Греков и Якубовский, Золотая Орда, 1937, էջ 103, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. գ, էջ 220, Г. Г. Микаелян, նշված աշխ., էջ 368, Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Ա, էջ 81, 346—347, 365։

12 Մատենադարանի ձեռագիր № 7442, թ. 280—283ա։

13 Ի. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն հիշատակարանները, Երևան, 1950, էջ 155—156։

Աստրախանի նախահայրն էր[14]։ Վոլգան և վոլգյան քաղաքները՝ Իթիլը, Հաշտարխանը, Սարայը, ապա և Ազովը հաճախ են հիշատակվում աղբյուրներում։ Աստրախանում և հարևան քաղաքներում հայերի բնակության մասին է վկայում նաև ռուս տարեգրությունը։ Այսպես, 1346 թ. ուժեղ համաճարակ է եղել Սարայում, Աստրախանում, որտեղ մեռել են «Մուսուլմաններ, թաթարներ և հայեր»[15]։ Գրիգոր քահանան իր 1341 թվականի հիշատակարանում նշում է. «Գրեցաւ գիրքս... ի քաղաքս յԱղախս, առ դրան սուրբ Լուսավորչին...[16]։

Զափածո հիշատակարանը Ազովն անվանում է աննման քաղաք[17]։ Այն փաստը, որ Աֆենտի դուստր Նաս խաթունը Ազովում գնել է ավետարան[18], հիմք է տալիս խոսելու Ազովում հայ բնակչության առկայության մասին, Ազովի, Կաֆայի և վոլգյան քաղաքների հայերի միջև կապերի առկայության մասին։ Վոլգայով ու Հաշտարխանով կապ էր պահպանվում Արևելքի հետ ընդհուպ մինչև Պարսկաստան ու Հնդկաստան[19]։ Վոլգա-դոնյան առևտրում մասնակցում էին նաև ռուսներ, որոնք աշխույժ գործարքներ էին կատարում Նիժնի Նովգորոդում ու Կազանում[20]։ Ակադ. Մ. Ն. Տիխոմիրովը գտնում է, որ XIV դարից սկսվում է նաև Մոսկվայի մասնակցությունը արևելյան լայն առևտրին[21], թեպետ ճանապարհներն անապահով էին ինչպես ռուսների, այնպես և այլազգիների համար։ Ինչպես հաղորդում է տարեգիրը, 1368 թ. ուշկունիկները կոտորել են «բուսուրման» և հայ վաճառականներին և թալանել նրանց անթիվ ապրանքները[22]։ Մոսկվայի մեծացմանն ու հզորացմանը զուգընթաց հաճախակի է դառնում հայերի այցելությունները՝ ինչպես Աստրախանից, Ազովից, այնպես էլ Ղրիմից և Կենտրոնական Եվրոպայից (լեհ-ուկրաինական ու մոլդավական հայ գաղութներից)։ Ոսկե Հորդան թեպետ մի կողմից խանգարում էր տնտեսության, առևտրի ու արհեստների զարգացմանը, մյուս կողմից հնարավոր էր դարձնում շփումները և առևտրական կապերը։ Այսպես, հունիսին, Հովհաննես Կարապետի տոնին, Կազանում տոնավաճառի էին հավաքվում արևելյան, ռուսական, այդ թվում մոսկովյան վաճառականները[23]։ Ակադ. Տիխոմիրովը գտնում է, որ մոսկովյան առևտրական գործարքներում հայ վաճառականների մասնակցությունը, ըստ երևույթին, պակաս կարևոր չի եղել դատելով մի քանի ակնարկներից, որոնց իմաստը պարզ է դառնում, երբ մենք ընդունում ենք նկատելի հայկական տարրի առկայությունը մոսկովյան բնակչության մեջ[24]։ Տիխոմիրովը կարծում է, որ Մոսկվայում արդեն XV դարում կար հայկական գաղութ, որը սկիզբ էր առել դեռևս XIV դարից։ Երբ 1390 թ.

---

14 А. Штылко, Иллюстрированная Астрахань, Саратов, 1898, էջ 2։

15 ПСРЛ, т. XXV, էջ 175։

16 Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հիշատակարանները, Երևան, 1950, էջ 329։

17 «Ի ծովս անցա այս անսահման ի քաղաքն ելա ի Ֆռանկ Կաֆան յԱզախ եկի այս անման գիրքս գրեցի դայս ղՎարդանս», նույն տեղում։

18 Նույն տեղում, էջ 330։

19 М. М. Ковалевский, К ранней истории Азова, Харьков, 1902, էջ 115—126։

20 М. Н. Тихомиров, Новый памятник Московской политической литературы XVI в., էջ 111—112։

21 М. Н. Тихомиров, Древняя Москва, Москва, 1947, էջ 100։

22 ПСРЛ, т. XIX, էջ 104։

23 М. Н. Тихомиров, Древняя Москва, էջ 98—99։ Հմմտ. ПСРЛ, т. XIX, էջ 33 և 229։

24 Նույն տեղում, էջ 142—143։

այրվեց Մոսկվայի պոսադը (Կրեմլի շուրջը ստեղծված արհեստավորա-առևտրական թաղամասը), պարզվեց, որ հրդեհն սկսվել էր հայազգի Աբրահամի տնից[25]։ Հայերի առկայությունն է վկայում նաև այն փաստը, որ միտրոպոլիտ Կիպրիանը կատաղի հակառակորդ լինելով «հայկական աղանդին», դժգոհություն է արտահայտում ռուսների ու հայերի միջև ամուսնական ու բարեկամական կապեր հաստատելու կապակցությամբ և կարգադրում է չթողնել հայերին ռուսական եկեղեցիներում աղոթելու, պասի ու տոնի օրերին նրանց մոտ չթողնել, սեր ու բարեկամություն չհաստատել, քանի որ նրանք իբր ուղղափառությունից հրաժարվել են։ Միտրոպոլիտների խստիվ ներշնչումների հետևում պարզ նկատվում է իրական դրությունը, — գրում է Մ. Ն. Տիխոմիրովը, — շարքային ռուս մարդիկ մեծ տարբերություն չէին տեսնում ուղղափառ և հայկական դավանանքների միջև, հաճույքով շփվում էին ու խնջույքներ ու բարեկամություն անում, ամուսնանում հայերի հետ, թողնում իրենց եկեղեցիները[26]։ Այլ դեպքում անհրաժեշտ չէր լինի եպիսկոպոսության կարգելիս պարտավորություն դնել նորընտիր հոգևորականի վրա հայերին ուղղափառ ձևով չպսակել, խնամություն և եղբայրություն նրանց հետ չունենալ[27]։ Եվ այդ հասկանալի էր, ինչպես ճիշտ նկատում է Տիխոմիրովը՝ «Մերձավոր Արևելքի քաղաքներում և ներքին Պովոլժիեում ռուս վաճառականների համար հայերը դավանանքով ավելի մոտ էին, և այդ բերում էր խնամության ու եղբայրության»[28]։ Չնայած տնտեսական անհրաժեշտությանը, առևտուրը հանդիպում էր մեծ դժվարությունների, արհեստավորների և վաճառականների կյանքն ու գույքը մշտական վտանգի տակ էին, ինչպես հաղորդում են տարեգրությունները, թալանն ու կողոպուտը սովորական երևույթ էր։ 1378 թ. Արապշահը ջարդում է ռուս հոստերին (խոշոր վաճառականներ) և թալանում նրանց ողջ հարստությունը[29]. նույնը տեղի է ունենում նաև Կաղանում[30]։ Բայց անգամ այդ պայմաններում նորանոր առիթներ էին ստեղծվում հայ-ռուսական հանդիպումների համար։ Մի քանի տարի հետո, 1395 թ. Լենկթեմուրը Դերբենտի և Թերեքի վրայով, ավերով ու ավարով հասավ Հաջի Թարխան-Աստրախան, ապա կողոպտեց ու ավերեց Սարայը, Ազովը, Թեոդոսիան[31]։ Թվում էր թե կյանքը մեռնում էր այդ քաղաքներում։ Բարբարոն, որ դրանից հետո եղել էր Աստրախանում, նշում է, որ քաղաքը գրեթե բոլորովին քանդված էր[32], մինչդեռ առաջ այն հայտնի էր իր հարստությամբ և մեծությամբ։ Բայց XV դարում այլևս ոչինչ չէր կարող կանգնեցնել առևտրի զարգացման անխուսափելի պրոցեսը։ Մոսկվայից վաճառականները մեկնում են Կաֆա, Ցարգրադ, Թոքատ, իսկ այդտեղից Մոսկվա էին գնում հայերը[33]։ Աստրախանը Լենկթեմուրից հետո, թեպետ

25 Иван Забелин, История города Москвы, ч. I, Москва, 1902, էջ 98։

26 М. Н. Тихомиров, Древняя Москва, էջ 142—143։

27 Նույն տեղում, էջ 143։ Հմմտ. Русская историческая библиотека (РИБ), т. VI, էջ 454։

28 Նույն տեղում, էջ 143։

29 ПСРЛ, т. X, էջ 24։

30 ПСРЛ, т. VI, էջ 188։

31 В. Г. Тизенгаузен, Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. ч. II, СПб, 1841, էջ 118—121։

32 В. Семенов, Библиотека иностранных писателей о России, т. I, СПб, 1836, էջ 56։

33 Б. Д. Греков, Крестьяне на Руси, Москва, 1946, էջ 550։

դառնում է ղփչաղ խաների մայրաքաղաք, կորցնում է իր երբեմնի տեղը, բայց հայ գաղութների կապերը Ռուսաստանի հետ շարունակվում են։ Սոլովյովը նշում է, որ Կաֆայից Մոսկվա էին գալիս հայերը։ Հորդայից վաճառականները առաջվա նման գալիս էին դեսպանների հետ. մի անգամ եկել էին 3200 վաճառական. պարզ է, դրանց մեջ քիչ չէին նաև հայերը[34]։ «Մոսկվայի առևտուրը վոլգյան քաղաքների հետ առանձնապես ուժեղանում է Կազանի խանության ստեղծումից հետո»,—գրում է Տիխոմիրովը[35]։

Հայերը XV դարի երկրորդ կեսին արդեն լավ գիտեին Մոսկվայի և Մոսկովյան պետության մասին, երևի նաև նրա տնտեսական ու ռազմական ուժի մասին։ Այդ է վկայում թեկուզ Մոսկվայի հիշատակությունը ժամանակի մի պոեմում, որի 12 տարբերակները պահպանվում են Մատենադարանում։ Մոսկվան համեմատվում է Հռոմի ու Կոստանդնուպոլսի հետ[36]։ Այդ ժամանակներում Կազանն ու Աստրախանը տարանցիկ առևտրի կարևոր կետեր էին, որոնց դերի մասին խոսում էին բոլոր ռուս և եվրոպական ճանապարհորդները Բարբարոն, Կոնտարինին, Աֆանասի Նիկիտինը, Վ. Պանինը, Մարկո Ռուսոն և ուրիշներ, որոնց հետ լինում էին բազմաթիվ վաճառականներ, այդ թվում և հայեր։ Երբ 1525 թ. Կազանի տոնավաճառը դադարեց, ինչպես նշում է Մոսկվայում գտնվող Վիեննայի արքունի դեսպան Հերբերշտեյնը, «սկսվեց թանկություն, զգացվեց բազմաթիվ ապրանքների պակաս, ապրանքներ, որոնք բերվում էին Վոլգայով Աստրախանից, ինչպես և Պարսկաստանից ու Հայաստանից»[37]։

Պավել Իովին նշում է, որ «Միդիացիները, հայերն ու պարսիկները գալիս էին Աստրախան՝ փառավոր տոնավաճառի[38]։ Գրիգոր Լուսիկովը ռուս արքունիքին հղած իր 1673 թ. նամակում նշում է. «100 տարուց ավելի է, որ հայերն ապրում են Աստրախանում՝ պոսադում՝ ըստ ցարի հրամանի»[39]։ Նման վկայություններն օգնում են մեզ հետամուտ լինել հայ գաղթավայրերի ստեղծմանը, թեպետ այդ մասին չեն պահպանվել ամբողջական ու մանրամասն տեղեկություններ։ Այս տեսակետից հետաքրքիր է ամեն մի հիշատակություն, ամեն մի պատառիկ։ Այն, որ Աստրախանում եղել է բավական մեծ հայ գաղութ դեռևս նախառուսական շրջանում, հաստատվում է թեկուզ հետևյալ փաստով. Սիմբիրսկի մարզում կա մի բարձունք՝ Армянская крутая гора, որն այդպես է կոչվում որպես հիշատակ Աստրախանի հայերի խռովության, երբ նրանք այնտեղ ամրություններ էին կառուցել (մոտ 500 սաժեն շրջագծով)[40]։ Քրիստա-

---

34 С. М. Соловьев, История России, книга I, էջ 1535։

35 М. Н. Тихомиров, Древняя Москва, էջ 98—99։

36 Տարբերակներից մեկում փեսացուն ասում է, որ իր հարսնացուն արժանի է Ստամբուլից ու Վենետիկից ավելին՝ Մոսկվային։ Տես Ա. Աբրահամյան, Ռուս ժողովուրդը և Մոսկվան հայ մատենագրության մեջ, Պետական համալսարանի գիտական աշխատություններ, հ. 27, էջ 209—235։ Ա. Մնացականյան, Մոսկվան միջնադարյան հայկական մի պոեմում, «Տեղեկագիր», 1948, № 3, էջ 50։

37 С. М. Соловьев, История России, книга I, էջ 1698։

38 Посольство от Василия Ивановича Великого князя Московского к папе Клименту VII. Семенов В., Библиотека иностранных писателей..., т. I, էջ 35։

39 Центральный государственный архив древних актов (կարճ՝ ЦГАДА), ф. 100 (Сношения России с Арменией), 1672—1673, д. I, л. 340—341.

40 Географический словарь Российского государства, ч. I, Москва, 1801, էջ 200։

փոր Բիրոն, որ 1570 թ. եղել էր Աստրախանում, Կազանից Աստրախան գնալիս տեսել էր տաշած քարերով կառուցված մի բերդ և մի տապանաքար՝ նետ ու աղեղով զինված մի հեծյալի քանդակով և հայատառ արձանագրությամբ[41]։ Նման կառույցի, ինչպես և խռովության համար պետք է, որ հայերը բավական մեծ թիվ կազմեին։ XV դարում և XVI դարի առաջին կեսին հայերի որոշ հոսանք է եղել դեպի Մոսկվա և Կազան։ Ինչպես կարդում ենք «Կազանի պատմության» մեջ, 1550—52 թթ., երբ սուր պայքար էր գնում Մոսկովյան պետության և Կազանի խանության միջև, Կազանում ի թիվս արևելյան վաճառականների կային բավական թվով հայեր, որոնց մեջ նաև փորձված թնդանոթաձիգներ։ Թաթարները սրանց ստիպում էին կրակ բացել ռուսների վրա, իսկ նրանք հրաժարվում էին։ Թնդանոթներին կապված, մահվան սպառնալիքի տակ հայերն ստիպված էին կրակել, բայց նրանք կրակում էին այնպես, որ արկերը կամ չհասնեին ռուսներին, կամ անցնեին նրանց գլխի վրայով[42]։ Կազանի հայ գաղութի գոյության մասին են խոսում մինչև այժմ հիշվող «Հայկական փողոցը», «Հայկական հրապարակը», «Հայկական գերեզմանատունը», որտեղ մնացել է մոտ մեկ մետր շառավիղ ունեցող հսկա քարե ժամացույցը[43]։ Երբ 1552 թ. Կազանը վերցնելուց հետո Իվան IV զորքով վերադառնում էր Մոսկվա, նրան դիմավորողների մեջ կային նաև հայեր։ Նույն Քրիստափոր Բիրոն ճանապարհորդելիս հանդիպել է մի շարք հայկական գյուղերի (Նիզավոյ-Նիզաբաղ), որտեղ հայերն արտադրում ու մշակում էին մետաքս։ Բիրոն Դերբենտում ոմն Հակոբից գնել է 35 տոննա ջրատարողության մի նավ (բուս)[44], որն այնտեղ էր բերվել Աստրախանից։ Ինչպես նշված է արտաքին առևտրի մասին վիճակագրական տվյալներում, հայերը առևտուր էին անում Աստրախանում նաև քաղաքը ռուսների կողմից նվաճվելուց հետո (1556)[45]։

Այս և նման փաստերը խոսում են Կազանում, Աստրախանում և Մոսկվայում հայկական բնակչության գոյության մասին, ընդ որում ոչ միայն առևտրականներից, այլև արհեստավորներից կազմված գաղութների գոյության մասին։

Ռուսաստանի վոլգյան քաղաքների և մասնավորապես հայկական գաղթավայրերի աճն ու ձևավորումը կատարվում էր Մոսկովյան պետության ուժեղացմանը զուգընթաց, Կազանի ապա նաև Աստրախանի նվաճումից հետո՝ XVI դարի երկրորդ կեսից, թեպետ թաթարական և թուրքական ապստամբությունները էլի ու էլի խանգարում էին խաղաղ քաղաքային կյանքի զարգացմանը։ Այսպես, 1569 թ. սուլթան Սելիմը Կաֆայի փաշա Կասիմի և Ղրիմի Դեվլեթ Գիրեյ խանի ղեկավարությամբ 70 հազարանոց բանակ ուղարկեց Աստրախանը նվաճելու համար, լավ հասկանալով, որ «ով տիրեց Աստրախանին, Վոլգային ու Յաիկին, նրանը կլինի ողջ Նոգայի Հորդան»[46]։ Դոնի և Վոլգայի միջև ջրանցքը փորելու և նավերը Վոլգա անցկացնելու Կասիմի ֆանտաստիկ պլանները չիրականացվեցին։ Ինչպես հայտնի է, Դոնի և Վոլգայի ավազանները ջրանցքով

---

41 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 433։

42 Казанская история, Москва, 1954, էջ 154։

43 Կազանի հայ գաղութի գոյությունը նշել է Ն. Ֆ. Վիսոցկին դեռևս 1880 թ.։ Տես Վ. Ոսկանյան, Վ. Գրիգորյան, Հայ գաղթավայրերում, «Տեղեկագիր», 1956, № 9։

44 Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա., ԺԴ—ԺԶ դ., Երևան, 1932, էջ 442—443։

45 М. Рыбушкин, Записки об Астрахани, էջ 56։

46 С. М. Соловьев, История России, книга II, էջ 620։

ւիացնելու պլանը առաջ քաշվեց նաև Պետրոս 1-ի օրոք՝ 1696 թ., որը նույնպես չկենսագործվեց[47]։ Հնարավոր չեղավ նավերի փոխադրումը նաև ցամաքով։ Աստրախանի կայազորի և նոր ուղարկված զորքերի ուժերով իշխան Սիրերբյանին ձախողեց թուրքական պլանները, Կասիմը ստիպված էր հրկիզել իր կառուցած փայտաշեն քաղաքը և հեռանալ[48]։ Դժգոհ անհաջողությունից, սուլթանը Ղրիմի Դեվլեթ Գիրեյ խանին 70 հազար զորքով ուղարկում է Մոսկվա, մինչև վերջին տունը հրկիզում քաղաքը՝ ետ պահանջելով Աստրախանն ու Կազանը։ Ռուսաստանի հարավային սահմանների վրա հարձակումներ են կատարում Թուրքիայի վասալները՝ Կովկասի ֆեոդալները։ Ինչպես նշում է Կ. Մարքսը, Մոսկովյան պետության դեմ «դենք վերցրին նրա շրջապատի թշնամիները՝ լեհերը, շվեդները, Աստրախանի թաթարները, թուրքերը։ Մոսկվան նորից հրկիզվեց թաթարների կողմից և շատ մոսկվացիներ ընկան պատերազմում»[49]։ Չնայած 25-ամյա Լիվոնյան պատերազմի (1558—1583) առաջացրած դժվարություններին, Ռուսաստանը ոչ միայն ետ էր մղում թուրք-թաթարական ագրեսիան, այլև ամրապնդում էր Պովոլժիեի և Հարավի քաղաքները։ 1558—59 թթ. Աստրախանը շրջապատվում է փայտյա պարսպով, հողաթմբերով և խրամատներով, որով և սկսվում է նոր Աստրախանի շինարարությունը։ Ստեղծվում էին նոր քաղաք-բերդեր (Վորոնեժը՝ 1586 թ., Կուրսկը՝ 1587 թ., Ցարիցինը՝ 1589 թ., Սարատովը՝ 1590 թ., Ելեցը՝ 1592 թ., Բելգորոդը՝ 1595 թ., Օսկոլը՝ 1598 թ., Վալույկին՝ 1599 թ., Ցարև-Բորիսովը՝ 1600 թ.)։ Պետք է ասել, որ XVI դարի վերջում Ռուսաստանի միջազգային դրությունը բարելավվեց ընդհանրապես, և մասնավորապես Մերձավոր արևելքում, որտեղ գրեթե անընդմեջ պատերազմներ էին գնում Թուրքիայի և Պարսկաստանի միջև։ Շահ-Աբաս Բորիս Գոդունովից օգնություն էր խնդրում, խոստանալով Ռուսաստանին դիջել ոչ միայն Հյուսիսային Կովկասը, այլև Դերբենտն ու Բաքուն, թեպետ մինչ այդ հավակնություն ուներ անգամ Աստրախանի նկատմամբ։ Այժմ ռուս-պարսկական հարաբերությունները կարծես նորմալ էին։ Աշխուժացել էր առևտուրը Պարսկաստանի հետ, հայ վաճառականները գնում էին ոչ միայն Աստրախան, այլև հասնում մինչև Մոսկվա, որտեղ արդեն XVI դարի վերջին հիշատակվում է Հայկական իշևանի (Армянский двор) գոյությունը։ Ռուս դեսպան Գրիգորի Վասիլչիկովը Պարսկաստանում բանակցություններ վարելիս ի միջի այլոց նշում էր, որ «Գիլանի թագավորի առևտրական մարդիկ մշտապես ապրում են մեր մեծ թագավորի հայրենիք Աստրախանում»[50]։ Բայց XVII դարի սկզբին հայերի թիվը փոքր է եղել՝ ընդամենը 11 ընտանիք[51], և հիմնական դերը կատարել են եկվոր հայ վաճառականները։ Աստրախանի, ուրեմն և հայ գաղութի դրությունը ծանրացավ լեհ-շվեդական ինտերվենցիայի տարիներին (1605—1612 թթ.), երբ Շահ-Աբասը ոչ միայն հրաժարվեց Անդրկովկա-

47 Նույն տեղում, էջ 1158։

48 Նույն տեղում, էջ 220—222։ Տե՛ս նաև Карамзин, История государства Российского, т. IX, СПб, 1903, էջ 61—64։

49 Архив К. Маркса и Ф. Энгельса, т. VIII, էջ 165։

50 Н. И. Веселовский, Памятники дипломатических и торговых отношений Московской Руси с Персией, т. I, СПб, 1890, էջ 28։

51 Նույն տեղում, հատ. 3, էջ 110—111 և 123—124։ Տե՛ս նաև Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագծեր հայ գաղթ. պատմության, հ. 1, էջ 373։

սի հյուսիսային մարզերն աղատելու խոստումներից, այլև թշնամական դիրք ընեց՝ ցանկանալով ընդլայնել պետության սահմանները և ամրապնդել իր տիրապետությունը Հյուսիսային Կովկասում։ Կեղծ Դիմիտրիի զինակից Իվան Զարուցկին և կինը՝ Մարինա Մնիշեկը ապաստան ընտրեցին Աստրախանը և բանակցություններ սկսեցին Շահ-Աբասի հետ՝ Ռուսաստանը մասնատելու նպատակով։ Շահի դեսպանը փորձեց սպանել վրացական թագավորի որդուն՝ Պանկրատին, որը Հռոմի պապի պատվիրակի հետ Մոսկվա էր մեկնում։ Մի կողմից լեհ-շվեդական ինտերվենցիան, մյուս կողմից հրով ու սրով գյուղացիական շարժումների ճնշումը Վասիլի Շույսկու կողմից՝ անապատ էին դարձրել Աստրախանը և ողջ Պովոլժիեն։ Դրությունը փոխվեց լեհ-շվեդական ինտերվենտների ջախջախումից հետո միայն։ Շահ-Աբասը հասկացավ, որ Թուրքիայի դեմ պատերազմի պայմաններում ձեռնտու չէր թշնամական քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ և որ ռուս-պարսկական առևտուրը կենսականորեն անհրաժեշտ է իր երկրի շահերի համար. 1615—1618 թթ. նա փոխեց իր վերաբերմունքը Ռուսաստանի հանդեպ։ Ինչպես գրում է Վ. Ի. Լենինը «կա ավելի մեծ ուժ, քան ուզածդ թշնամական պետությունների կամ դասակարգերի ցանկությունը, կամքը և որոշումը։ Դա համաշխարհային ընդհանուր տնտեսական հարաբերություններն են...[52]։

XVII դարի երկրորդ տասնամյակի վերջերին տնտեսական կյանքի վերականգնման և ռուս-պարսկական առևտրական կապերի վերահաստատման հետ մեկտեղ վերականգնվել սկսեց նաև հայ գաղութը։

Հայ, հնդիկ, պարսիկ վաճառականները նորից շարժվում էին դեպի Աստրախան և բնակություն հաստատում։ Աստրախանի պատմաբան Ռիբուշկինը գրում է, որ այդ ժամանակ «Ռուսական կառավարությունը, ձգտելով օգուտ քաղել... նրանց թույլ է տալիս բնակվել Աստրախանում՝ այսպես կոչված Սադոմայա Բուրգայի վրա, որտեղ այժմ գտնվում է Վոզդվիժենսկայա եկեղեցին և Հայկական տաճարը։ Սակայն Աստրախանում եղող ասիացիներից առավելապես հայերն օգտվեցին տրված ազատությունից, և գտնելով իրենց համար վստահելի ապաստան ու հովանավորություն, նշանակալիորեն բազմացան»[53]։ Հայերը առաջին օտարերկրացիներից էին, որոնք XVII դարի սկզբին (1625 թ.) արդեն ունեին իրենց հատուկ առևտրական հրապարակը (Торговая площадь), առևտրական տները (ռուսականը ստեղծվել է 1663—1665 թթ.) և գերեզմանատունը[54]։ Աստրախանցի հայերը, ինչպես և պարսկահպատակ հայերն ու ադրբեջանցիները առևտրական կապեր էին հաստատում վոլգյան քաղաքների և

---

52 В. И. Ленин. Сочинения, изд. IV, т. 33, էջ 123։

53 Рыбушкин, նշված երկր., էջ 18։ Տես նաև Н. Я. Марр. Избранные работы, т. 5, էջ 102։ Նշենք, որ Մառի խոսքերը սխալ հասկանալով, ոմանք գրել են, իբր 1619 թ. Աստրախանի հայերը ռուսական պետության հետ առևտրական պայմանագիր էին կնքել։ Դա պարզապես թյուրիմացություն է։ Իհարկե, հայերը չէին կարող առանց արտոնագրի բնակվել Աստրախանում կամ առևտուր անել ռուսական քաղաքների հետ, բայց չի կարելի առանձին արտոնագրերը շփոթել ռուս-հայկական առևտրական պայմանագրերի հետ, որոնք կնքվել են 1667—1673 թթ.։

54 А. Олеарий. Описание путешествия в Московию..., СПб, 1906, էջ 455։ Տես նաև Ключаревская летопись, Астрахань, 1887, էջ 19։

մոսկվացիների հետ։ 1626 թ. չորս հայ և երկու պարսիկ վաճառականներ մեծաքանակ ապրանքով Աստրախանից Մոսկվա են գնում[55]։

1632 թ. Ղրիմից իր ռուս կնոջ՝ Օկսինիայի հետ Մոսկվա է գնում և մշտական բնակություն հաստատում Սարգիս Օվանեսովը՝ ծառայելով դեսպանական ատյանում։ Նրա մահից հետո կնոջը նշանակվում է պետական թոշակ։ Սարգիս Օվանեսովի ցուցմունքից երևում է, որ Մոսկվայում ապրում էին նաև այլ հայեր, որոնց տրվում էր ավելի մեծ թոշակ, քան իրենն[56]։

1640 թ. Աստրախանում սրդեն կառուցվում է հայկական եկեղեցի, որն անմիջականորեն կապված էր էջմիածնի հետ։ Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ հայերը մասնակցում էին նաև քաղաքական կյանքին։ Պատահական չէր նրանց մտերմությունը Օլ'տարիի և Հոլշտինիայի դեսպանության ղեկավար Օտտո Բրուգեմանի հետ, ինչպես և դեսպանության հետ երկու հայերի ուղեվորությունը։ Աստրախանցի հայերը մասնակցել են 1642 թ. կազմակերպված ռազմական արշավանքին, մի հանգամանք, որն ընդգծվում է աստրախանցի Թավաքալյանի խնդրագրում որպես ծառայություն ռուս արքունիքին (1647 թ.)[57]։ Հիշենք նաև, որ մեծահարուստ վաճառական Թավաքալյանին տրված էր արտոնագիր, որից օգտվելով նա Սոսկվա էր տարել 2500 ռ. ապրանք։ Թավաքալյանի որդին ծառայում էր Մոսկվայում՝ որպես դեսպանական ատյանի թարգման։ Հայ թարգմանիչներ (толмачи) հանդիպում են նաև Աստրախանում։

1654 թ. Պարսկաստանից փախչում և Աստրախանում ապաստան է գտնում ջուղայեցի Վասիլի Դաուդովը, որը հետո մեկնում է Մոսկվա և շուրջ 50 տարի ծառայում դեսպանական ատյանում։ Բոլոր փաստերը խոսում են այն մասին, որ Ռուսաստանում բարյացակամ վերաբերմունք կար հայերի և ընդհանրապես Պարսկաստանից եկող վաճառականների նկատմամբ[58]։ 1659 թ. տոլմաչի պաշտոնի է նշանակվում աստրախանցի հայ Վասիլի Իվանովը, որը շարունակում է իր ծառայությունը մինչև 70-ական թվականները[59]։ 1660-ական թվականներին նկատելիորեն ավելի շատ են հանդիպում հայերի անունները Մոսկվային ու Աստրախանին վերաբերող գործերում (Մարտին Նազարով[60], Վասիլի Իվանով[61] և ուրիշներ)։ 1673 թ. մայիսի 20-ի «Ուկազում» մենք իմանում ենք. «Մեր թագավորական մեծության հրամանագրով Աստրախանում կառուցված են Դիլանի, բուխարական ու հնդկական իջևաններ (дворы) և հայկական թաղամաս (Армянская слобода), և այն օտարերկրացիները, որ խնդրել են հավերժական հպատակության տակ վերցնել իրենց՝ կանանց ու երեխաների հետ, դրանք՝ 8 հայեր, 16 գիլանցիներ, 18 բուխարացիներ, 12 հնդիկներ, ընդամենը 77 մարդ՝ երդման են բերվել»[62]

Ռուսաստանից ինչ-որ հանձնարարությամբ Պարսկաստան է ուղարկվում

---

55 ЦГАДА, ф. СРА, 1626, дело б/н, л. 1—2.

56 Նույն տեղում, 1632, թ. 1—14։

57 Նույն տեղում, 1647, թ. 1—5։

58 Տես Վ. Ոսկանյան, Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դ., ԳԱ «Տեղեկագիր», 1948, № 1։ Տես Акты исторические, т. III, էջ 134։

59 Архив Ленинградского отделения Института истории АН СССР (հետագայում կարճ՝ АЛОИИ), ф. Астраханской приказной палаты (կարճ՝ АПП), д. 5398, л. 1—3.

60 Նույն տեղում, № 5080։

61 Նույն տեղում, № 5551։

62 Նույն տեղում, № 6080։

աստրախանցի Աթանաս Իվանովը (Афонка Иванов)։ «Հեռավոր ծառայության և շատ աշխատանքի համար» ցարական հրամանագրով պահանջվում էր նա վերադարձնել նրանից գանձված տարկը, որպեսզի նա իր հայրենակիցների աչքում «վիրավորանք կրած չերևա»[63]։ Սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում պարզել այդ մարդկանց դրաղմունքը, կատարած հանձնարարության բովանդակությունը, մշտական բնակավայրը։

Աստրախանի հայերը հայտնի էին նաև որպես լավ արհեստավորներ, որոնք իրենց արտադրական հմտություններով ու փորձով կարևոր ծառայություն էին մատուցում երիտասարդ ռուսական քաղաքին։ Հետաքրքրական է այն փաստը, որ հայերը, բացի իրենց ավանդական սրհեստներից, զարգացնում են նաև նոր մասնագիտություններ։ Երբ Գոլովինը Աստրախանից պահանջեց առագաստային գործի վարպետներ, կանչելերին պատասխանեցին, որ այդ վարպետները բոլորը թուրքեր ու հայեր են, որոնք Մոսկվա փոխադրվել չեն ուզում[64]։ Հատկապես նշանակություն էր տրվում հում մետաքսի արտադրության, մի ապրանք, որը հետաքրքրում էր պետությանը։ Ջուվաշների մոտ հում մետաքսը անվանվում էր «հայկական մետաքս»[65], քանի որ նրա ներմուծողներն ու մշակողները մեծ մասամբ հայեր էին։ 1658 թ. արքունի պահանջով Աստրախանից Մոսկվա է ուղարկվում հում մետաքս, «որն Աստրախանում արտադրել էին «տարերկրացիներն ու հայերը»[66]։ Սև խավիարը կամ «իկրան» ռուսական աղբյուրներում հաճախ անվանվում է «հայկական իկրա»[67]։ Բելը իր ուղեգրության մեջ հիշատակում է, որ «Ուչուգի տակ որսում են օսետր և բելուգա ու պատրաստում հայկական իկրա»[68]։ Աստրախանի հայերը զբաղվում էին նաև խաղողագործությամբ և դինեգործությամբ, քանի որ այդ պահանջվում էր արքունիքի համար։ 1652 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարը կարգադրել է Աստրախանի վոյեվոդներին փորձի համար խաղողից դինի արտադրել[69]։ 1659 թ. Մոսկվայից Աստրախան ուղարկվեց Ալեքսեյ ցարի հրամանը՝ թույլատրել աստրախանցի հայ Իվանեսին, որը ցարական արքունիքին բարձրորակ խաղող (виноград доброй) էր մատակարարում, իր կարիքների համար թողած խաղողը վաճառել առանց հարկ վճարելու[70]։ Աստրախանցի հայերի մեջ մենք հանդիպում ենք սաֆյանային գործի վարպետներ Մարտին Մարտյասովին[71] (որը մեծ դեր է կատարել Ռուսաստանում այդ արհեստի զարգացման գործում) և Ժերեմիա Բարխուդարովին[72], ինչպես և առագաստագործի, խավիար պատրաստողի, մետաքսագործի և այլ մասնագիտության մարդկանց, որոնց Ռիվը

---

63 Նույն տեղում, № 7530, թ. 5։ Նմանօրինակ փաստաթղթեր հայերի մասին կան նաև այլ գործերում՝ տես № 7001 (Շահիր Իվանիսով, Մելչկո Ալյասով), № 7010 (Վասիլ Ասագուլով), № 7438 (Մարտին Նազարով), № 7548 (Ալյոշա Դրուզինցով) և այլն։

64 Письма и бумаги Петра Великого, т. III, էջ 1065։

65 Н. Я. Марр, Избранные работы, т. 5, էջ 192։

66 С. М. Соловьев, указ. соч., книга III, էջ 697։

67 Описание Московии при реляциях Корнейля. В. Семенов, Сказания..., т. II, стр. 19.

68 «Бельевы путешествия чрез Россию в разные асиатские земли», СПб, 1776, стр. 262.

69 Астраханские ведомости, 1851, № 2.

70 АЛОИИ, ф. АПП, № 336, л. 1—2.

71 Նույն տեղում, № 5429։

72 Նույն տեղում, № 7153։

մեծանում է 1660-ական թվականներին։ Կազանում այդ ժամանակ կար 20 տուն հայ, հայեր կային նաև Ավիյաժսկում. 1667 թ. հոկտեմբերին սվիյաժսկցի հայ Իվանես Սարիպովը Վոլգայով տանում էր 10050 փութ աղ[73]։

1659 թ. Նոր Ջուղայից Աստրախան են մեկնում և 1660 թ. Մոսկվա հասնում 9 վաճառականներ (Խոճա Զաքարի ղեկավարությամբ), իրենց հետ բերելով հանրահայտ ադամանդյա դահիր և այլ բազմաթիվ արևելյան ապրանքները, որոնց արտադրությունն ու առևտուրը հայերի ձեռքին էր և որոնք պետք է ցույց տային հայ վաճառականների հարստությունը, հնարավորությունները ուրեմն և նրանց հետ առևտրի օգտավետությունը ցարի և Ռուսաստանի համար[74]։ Հայկական կոմպանիայի հետ 1667 թ. առևտրական պայմանագիրը կնքելը մեծապես նպաստեց Ռուսաստանի և մասնավորապես Մոսկվայի, Աստրախանի և վոլգյան այլ քաղաքների ապրանքաշրջանառության մեծացմանը։

Կցկտուր են մեզ հասած տեղեկությունները Աստրախանի, Կազանի, Մոսկվայի և այլ քաղաքների հայ բնակիչների՝ արհեստավորների ու վաճառականների մասին, բայց պահպանված պատառիկներն անգամ մեծ արժեք են ներկայացնում, քանի որ հարցի շուրջը որոշ պատկերացում ստեղծում են։ Ռուս հոստերի բողոքներից պարզվում է, որ Շամխալը թալանել է նրանց ապրանքների քարավանը, որի հետևանքով միայն աստրախանցի հայ Սեսատորը կորցրել է 5000 ռ. ապրանք[75]։ Նման հարստության տեր վաճառականներից ստացված հարկերը, ինչպես դրսից եկողներից դանձվող մաքսերը լրացնում էին դեֆիցիտով տառապող ցարական գանձարանը։ Պարզ էր, որ ռուս արքունիքը պետք է քաջալերեր առևտուրը, ուժեղացնելով Ռուսաստանի տրանզիտային նշանակությունը Արևելքի ու Արևմուտքի համար։ 1667 թ. հայկական առևտրական ընկերության հետ կնքված պայմանագիրը հսկայական նշանակություն ունեցավ ինչպես հայ-ռուսական տնտեսական ու քաղաքական կապերի ամրացման, այնպես և ռուսահայ գաղթավայրերի հետագա զարգացման համար[76]։ Այդ պայմանագրի կատարմանը և առևտրին նպաստելու համար որոշվեց Աստրախանում կառուցել «Օրյոլ» ծովային նավը՝ առաջին մեծ նավը Կասպից ծովում։ Ավելացել էր գետային նավերի թիվը։ Աշխուժացել էր կյանքը Աստրախանում։ Առագաստագործության վարպետ հոլանդացի Ատրեյսը իր «Երեք ճանապարհորդություն» հայտնի գրքում նշում է Աստրախանի մեծությունը, հարստությունը և շեշտում, որ հայերը, պարսիկները ու հնդիկները այնտեղ մեծ առևտուր են անում ու նպաստում քաղաքի ծաղկմանը[77]։

Նմանօրինակ վկայություն ենք գտնում «Օրյոլ» նավի կապիտան Դավիդ Բուտլերի նամակում, որտեղ նա հիշատակում է նաև քաղաք-բերդ Աստրախանի սպառազինությունը՝ 500 մետաղյա թնդանոթներով և հզոր կայազորով։ Այդ մեծ ու գեղեցիկ քաղաքում ռուսների հետ միասին առևտուր են անում բու-

---

73 Նույն տեղում, № 5350։

74 ЦГАДА, ф. СРА, д. 1660 г., л. 1—57.

75 С. М. Соловьев, указ. соч., книга III, էջ 567։

76 Եթե հավատանք Մ. Ռիբուշկինին, պարսկահպատակ հայերը, կառավարության թույլտվությամբ 1667 թ. վերարնակվելով Աստրախանում՝ իրենց բազմությամբ կերազանցում էին ռուսներին։ Տե՛ս М. Рыбушкин, Записки об Астрахани, էջ 24։

77 Я. Я. Стрейс, Три путешествия, Москва, 1935, էջ 193։

խարացիները, ղրիմցիները, Նողայի թաթարները, կալմիկները, պարսիկները, հայերը, հնդիկները[78]։

Այսպիսով, 1667 թ. պայմանագրից հետո ամբողջ Վոլգյան մայրուղին դարձավ հայ վաճառականների, նրանց գործակատարների ու բանվորների, կրոնավորների ու դիվանագետների համար բանուկ ճանապարհ, իսկ ռուսական քաղաքների հայաբնակ գաղութները՝ Աստրախանից մինչև Կազան, Ներեխտա, Արխանգելսկ՝ հանգրվաններ, առևտրական քարավանների կանգառներ, վաճառքի կենտրոններ[79]։ Աստրախանի բնակիչները, ինչպես և ռուսները ընդհանրապես լավ էին վարվում հայերի հետ։ Անդամ Ս. Ռազինի ղեկավարած գյուղացիական ապստամբության ժամանակ, երբ հետապնդվում էին օտարերկրացիները (որոնք կամ նավատորմի ու բանակի սպաներ էին կամ վաճառականներ), թալանվում ցարի, միտրոպոլիտի, հայ և պարսիկ վաճառականների քարավանները, Աստրախանի հայ բնակչությունը առանձնապես ոչնչով չտուժեց։ Ավելին, ինչպես վկայում է Ստրեյսը, ռազինականները իրենց բռնագրաված ապրանքը շատ էժան գնով վաճառում էին հայ առևտրականներին և կամ բաժանում աղքատներին[80]։ Ուշագրավ է, որ ռազինականների մեջ ևս կային հայեր, որոնց հետապնդում էր իշխանությունը[81]։ 1668—1672 թթ. ընթացքում ռուս-պարսկական առևտուրը դադարեց։ Արքունիքը դժգոհ էր, որ հայերը քիչ են մետաքս բերում, չեն կատարում 1667 թ. պայմանագիրը։ Երևի մասամբ դրանով է բացատրվում այն, որ հայերին թույլ չէին տալիս Աստրախանում նոր եկեղեցի կառուցել[82]։ 1672 թ. Աստրախան է գալիս Հայկական առևտրական ընկերության լիազոր և շահի դեսպան Գրիգոր Հուսիկովը՝ ռուս-պարսկական հարաբերությունների և առևտրի կարգավորման համար, ապա մեկնում Մոսկվա։

Բանակցությունների ժամանակ Հուսիկովը նորից բարձրացնում է եկեղեցի շինելու հարցը, այն հիմնավորելով հետևյալ կերպ. «Աստրախանում ավելի քան հարյուր տարի է, որ մեծ թագավորի կարգադրությամբ Պոսադում հայերն ապրում էին իրենց կանանցով... (տեքստը հին է, քայքայված, տեղ-տեղ անընթեռնելի.— Վ. Ո.)։ Եվ աստծո կամքով համաճարակ եղավ (моровое поветрие—Վ. Ո.) և դրանից հայերը մեռան և մնացին միայն 10 տուն։ Նրանք եկեղեցի ունեին և այդ եկեղեցում քահանաներ։ Բոյարին իշխան Յակով Նիկիտիչ Օդոյեվսկին Նորին ցարական մեծության հրամանով... քաղաքի պարիսպներից դուրս հանեց, ...իսկ եկեղեցին մնաց դատարկ։ Այժմ մեր եղբայրները հում մետաքսով և այլ ապրանքներով Աստրախան են գալու, և ապրելու են առևտրա-

78 Русский архив. т. I, СПб. 1880, էջ 83։

79 Մեր կարծիքով XVII դարի կեսերից է, որ Վոլգան դառնում է «Հայկական ճանապարհ», և չի կարելի համաձայնվել պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հետ, երբ նա բերելով «Հայկական ճանապարհի» մասին ռուսական երկտողը գտնում է, որ այն վաղ շրջանի հորինվածք է։ (Не бойся на Армянской дороге воров, а бойся в Нерехте каменных домов)։ Դրանում հեշտությամբ մենք կհամոզվենք, եթե հիշենք թեկուզ այն, որ Ներեխտան որպես աշխարհագրական տեղանուն նշվում է միայն 14-րդ դարում, իսկ քաղաք է դառնում ավելի ուշ։ Այդ է վկայում նաև լեզուն, որը ոչնչով չի հիշեցնում հին սլավոնականը։

80 Я. Я. Стрейс, указ. соч., էջ 200։

81 Крестьянская война под предводительством Степана Разина, Сборник документов. т. I, Москва, 1954, էջ 86։

82 АЛОИИ, ф. АПП, д. 6080.

կան տանը (гостиный двор), իսկ մեզ մոտ, քաղաքում, հայկական եկեղեցին դատարկ է մնացել և մենք մեր դավանանքով աղոթելու տեղ չունենք, քանի որ քահանան ապրում է բերդաքաղաքից դուրս..., իսկ մեր առևտրականներին դիշերը քաղաք մտնել կամ քաղաքից դուրս դալ չի կարելի, որովհետև քաղաքը (պարիսպը — Վ. Ռ.) փակվում է և նրանք աստծուն աղոթելու տեղ չունեն»[83]։ Այսպես, իբրև թե Պարսկաստանից եկող-դնացող հայ վաճառականների ագոթատեղի մասին մտահոգված, Գ. Լուսիկովը փաստորեն բանակցություններ է »կսում կանցլեր Արտամոն Սերգեևիչ Մատվեևի հետ՝ Աստրախանի հայ գաղութի արմատական շահերը պաշտպանելու ուղղությամբ, պահանջելով, որ «մեծ թագավորն իր ողորմածությունն անի, հանձնարարի ուղարկել իր թագավորական հրամանագիրը Աստրախան՝ վոևվոդներին, որպեսզի նրանք՝ այդ հայերը իրենց քահանաների հետ միասին վերաբնակեցվեն քաղաքում, հին բնակատեղի իրենց տներում։ Իսկ վաճառած տները ետ վերադարձվեն տերերին, նրանցից վերցնելով այնքան գումար, որքանով վաճառել էին։ Եվ ըստ հնույն թույլատրվի կառուցել իրենց եկեղեցին, իսկ առևտրական մարդիկ, որոնք պետք է գան այնտեղ, նրանք աստծուն պիտի աղոթեն նրա, մեծ թագավորի, նորին ցարական մեծության երկարամյա առողջության ու հաջողության համար։ Իսկ եթե այլ հայեր Աստրախան գնալով կյանկանան ամուսնանալ և մնալ Աստրախանում... որպեսզի նրանց Աստրախանի հայկական թաղամասում տեղ տրվի և նրանք այդ տեղերում իրենց համար տներ (дворы — Վ. Ռ.) կառուցեն»[84]։

Լուսիկովի բանակցությունները հաջողությամբ պսակվեցին. պայմանագիրը վերահաստատվեց և 1673—74 թթ. սկսվեց աշխույժ առևտուրը, ըստ երևույթին բարելավվեց նաև Աստրախանի հայերի վիճակը, քանի որ գաղութը նորից աճեց, այնտեղ բնակվեցին նորանոր մարդիկ։ Թեպետ 1682 թ. փետրվարի 23-ի հրամանով արգելվեց այլազգիներին թույլատրել մշտական բնակություն հաստատել[85], սակայն բացառություն արվեց հայերի, վրացիների ու հնդիկների համար[86]։ Հավանարար Լուսիկովի առաջարկը քննվել էր, դրա համար էլ, հայոց եկեղեցու վիճակի մասին հարցում է արվել Աստրախան։ XVII դարի կեսերին վատացել էր Կազանի հայ գաղութի վիճակը՝ հավանարար համաճարակի հետևանքով։ Պրոֆ. Ա. Գ. Արրահամյանը ուշադրություն է դարձրել Վասիլ Գրիչի հիշատակարանի վրա, որի համաձայն նա Կազանում մի ձեռագիր է ստեղծել՝ որպես «մնայուն յիշատակ Խուլանի ժողովրդեան»[87]։ Գրիչը հիշել է մի շարք անուններ՝ «Խազանի ամենայն ժողովրդին մեծ և փոքր», որը հիմք է տալիս ենթադրել հայ գաղութի գոյությունը։ Սակայն 1670-ական թվականներին գաղութը փաստորեն դադարել է գոյություն ունենալուց և ստիպված Գ. Լուսիկովը հոգում էր նաև Կազանի հայերի մասին։ Նախ ասենք, որ մինչև XVII դարի կեսերը Աստրախանի հետ միասին Կազանն էլ եղել է խոշոր քաղաք (20 հազ. բնակչությամբ) և հայերի գաղթօջախներից մեկը, որտեղ գոյություն է ունեցել հատուկ հայկական թաղամաս։ 1646 թ. գրանցման մատյանում (перепис-

83 ЦГАДА, ф. СРА, 1672—1673, д. 1, л. 340—341.

84 Նույն տեղում։

85 Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР, выпуск III, Ленинград, 1922, էջ 253։

86 Դե Բրուին նշում է, որ Աստրախանի Կրեմլում գիշերը մնալ կարող էին միայն հայերը։ Տե՛ս ОИД, т. III, Москва, 1872, էջ 186—189։

87 Ա. Գ. Արրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1965, էջ 371—372։

ная книга) հիշատակվող մի քանի թաղամասերից (слободы) մեկը անվանված է Հայկական[88]։ Բայց Գ. Լուսիկովը հայտնում է, որ Կաղանում ապրող 20 տներից 17-ը զոհ են դարձել համաճարակի, 2-ը փոխադրվել են Աստրախան, ապրում են Հայկական սլոբոդայում, իսկ Կաղանում մնացել է միայն մի հայ՝ Ղազար Գրիգորևը, որն ունի 6 աղջիկ և մի քանի որդի։ Նրա տղաներն ու աղջիկները հասունացել են, իսկ ամուսնացնելու համար փեսացուներ ու հարսնացուներ չկան։ Ուստի խնդրում է նրան ևս թողնել Աստրախան[89]։ XVII դարի վերջին երեսունամյակում զգալիորեն աճում է Աստրախանի նշանակությունը։ Բացի Լուսիկովից, Ռոմոդամսկուց, խոճա Զաքարից և այլ մեծահարուստ խոջաներից Աստրախան են գնում հարյուրավոր վաճառականներ, նրանց գործակատարները, բանվորներ, արհեստավորներ ու արվեստավորներ, դիվանագետներ, բանագնացներ, ազատագրական շարժման գործիչներ։ Նրանք շաբաթներով ու ամիսներով, իսկ երբեմն տարիներով, ապրում էին այնտեղ (ինչպես և Կաղանում, Մոսկվայում), կապվելով տեղի հայերի հետ, նրանց հաղորդակից անելով երկրի կյանքին, ժողովրդի ծանր վիճակին և ազատագրական ձգտումներին. (միայն մեր ունեցած տեղեկություններով XVII դարում դրանց թիվը հասնում է 300-ի)։ XVII դարում և XVIII դ. սկզբին Աստրախանում ու Մոսկվայում են եղել այնպիսի դեմքեր, ինչպիսին են Ավգուստինոս Բաջեցին, Կարապետը, Կոստինոսը, Արթենիոսը, Դաուդովը, Բոդդան Գուրջին (Գուրդիյը), Անտոնիոսը, Նազարիոսը, Կոստանդին Քրիստաֆորովը, Փարսադան Գուրջին (Գուրդեցկին), Իսրայել Օրին, Մինաս վարդապետը, Օրեխովիչը և ուրիշներ։ Աստրախանում և Մոսկվայում հայ գործիչները հանդիպել են ու գործակցել իրենց ժամանակակից ռուս և վրաց գործիչների հետ՝ սկսած՝ Օրդին Նաշչոկինից ու Արտամոն Մատվեևից, Գոլիցինից և Ուկրաինցևից մինչև Պետրոս Մեծը, Թեյմուրազից ու Նիկոլայ Դավիդովից մինչև Արչիլն ու Վախթանգը։ XVIII դարի հենց առաջին տարիներին Մոսկվայում մշակվում է Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրության ծրագիրը, գծագրվում Հայաստանի ու Անդրկովկասի քարտեզները, կապ հաստատվում դաշնակից ժողովուրդների ներկայացուցիչների միջև[90]։ Ազատագրական ծրագրերը XVIII դարի սկզբներին չէին կարող իրագործվել, բայց դրանք նպաստում էին քաղաքական ու տնտեսական կապերի ամրապնդմանն ու հայ գաղթավայրերի աճմանը։ Մեծանում է ու ձևավորվում Մոսկվայի հայ գաղութը, իսկ Մինաս վարդապետը դառնում թեմի առաջնորդ, որը ճանաչված էր ինչպես ցարի, այնպես էլ էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսների կողմից։ Ի. Օրին, Մինաս վարդապետը և Սաֆար Վասիլևը դառնում են պաշտոնական ներկայացուցիչները ռուս իշխանությունների առաջ և ռուս իշխանությունների լիազորները՝ հայերի մեջ։

Պետրոս 1-ինը, որ խելացիորեն օգտագործում էր Արևմուտքի և Արևելքի ժողովուրդների կուլտուրական նվաճումներն ու արտայրական փորձը, քաջալե-

---

88 В. Борисов, Город Казань по данным переписной книги 7154 (1646) года, էջ 15։

89 Լուսիկովը գրել է... «Замуж их выдать не за кем, русские люди их не емлют, а сыновям дочерей своих не дают, и чтоб великий государь... велел указ послать, чтоб того армянина Казара Григорьева з детьми отпустить в Астрахань». ЦГАДА, ф. СРА, 1672—1673, д. 1, л. 343—344.

90 Տես Վ. Ոսկանյան, Ի. Օրու կողմից Պետրոս Մեծին հանձնված Հայաստանի քարտեզը, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 4։

ում էր հայերի հոսանքը Ռուսաստան[91], նրանց արհեստների ու առևտրի ծավալումն ու զարգացումը։ Նա ձգտում էր ոչ միայն ներմուծել հում մետաքս կամ մետաքսյա գործվածքներ, այլև ստեղծել հայրենի մետաքսագործություն։ Պետրոս 1-ինը քաջալերում է թթենիների ծառատունկը Աստրախանում և այլն[92]։ Հետագայում Կիզլյարում ևս սկսեց մետաքսագործությունը և գինեգործությունը[93]։ Մոսկվացի հայ Սաֆար Վասիլևը 1710 թ. մարտի 12-ին խնդրում է Պետրոսին թույլատրել, որ ինքը կառուցի մետաքսամշակման գործարան[94]։

Հայերի տրանզիտային (ինչպես և տեղական) առևտուրը ուժեղ թափ է ստանում XVIII դարում։ Այդ նշում են և արխիվային նյութերը, և օտարերկրացիների ուղեգրությունները։ Բելլը գրում է, որ «Հայերը կատարում են պարսկական առևտրի մեծագույն մասը»[95]։

Պետք է ասենք, որ ոչ միայն XVIII դարի սկզբներին, այլև հետագայում Ռուսաստանում արտադրվող հում մետաքսը չէր կարող բավարարել երկրի մեծ պահանջը, և ներմուծումը մնում էր զարգացող արդյունաբերությանն ապահովելու հիմնական միջոցը։ Ներմուծվում էին նաև այլ արևելյան ապրանքներ՝ ամեն տեսակի գործվածքներ, թանկագին քարեր, ներկեր, ինչպես նաև համեմունքներ, մրգեր, քաղցրավենիքներ։ Եվրոպայից ու ռուսական քաղաքներից Աստրախան էին բերվում արդյունաբերական ապրանքներ՝ զանազան կտորեղեններ, պերճանքի առարկաներ, ժամացույցներ, հայելիներ և այլն։ Դե Բրուինը, որ 1702 թ. Աստրախանում է եղել, գրում է. «Ապրանքները Աստրախանում այնպես բազմապիսի են, ինչպես մարդիկ ու նրանց հագուստները ռուսներ, թաթարներ, հայեր, պարսիկներ, բուխարացիներ, հնդիկներ։ Մայրամուտին թաթարները պետք է հեռանային քաղաքից (միջնաբերդից), իսկ հայերը կարող էին ռուսներին հավասար մնալ և առևտուր անել, թեպետ և ունեին սեփական թաղամաս»[96]։ Դե Բրուինի կարծիքով, հայերը 40 տուն էին, բայց կային նաև եկվորներ, որոնք իջևանում էին քարվանսարայում կամ հատուկ նրանց համար կառուցված երկհարկանի շենքերում[97]։ Աստրախանից Հայաստան ու Վրաստան եկած քարավանները բերում էին ամեն տեսակի հրապուրիչ, գողտրիկ ու անծանոթ ապրանքներ, որոնց հմայքը ժամանակի բանաստեղծ Նաղաշ Հովնաթանն արտահայտել է՝ համեմատելով դրանց կապույտը իր սիրած աղջկա կրծքի հետ.

Քո ծոցն՝ բեռն-բարխանայ,
Նոր է եկած Հաշտարխանայ, զալում եար, է՞յ,
Թող Նաղաշն իւր ձեռոք բանայ,
Նազլու յար, ինսաֆ արա, ամա՞ն, ամա՞ն[98]։

91 Սենատին տրված իր հրամանով Պետրոսը պահանջում էր «մեծացնել պարսկական առևտուրը և ինչքան հնարավոր է սիրալիր վարվել հայերի հետ, ինչքան կարելի է թեթևացնել նրանց վիճակը, որպեսզի դրանով նրանց շահագրգռենք ավելի շատ մեզ մոտ գալուց»։

92 Երբ Պետրոսը լսում է, որ եղել են ծառերը ջարդելու դեպքեր, հատուկ հրամանով դա հայտարարում է հանցագործություն, սպառնալով մահվան պատժով։ Տե՛ս «Полное собрание законов» (կարճ՝ ПСЗ), № 1792.

93 XVIII դարում Կիզլյարում տնկվեց կես միլիոնից ավելի թթենի և դարի վերջին Կիզլյարի հայերը արտադրում էին 135.000 դուլլ գինի։ Տե՛ս Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа, Москва, 1833, т. II, էջ 97։

94 ЦГАДА, ф. СРА, 1710, д. 3, л. 1—3.

95 «Бельевы путешествия...», էջ 34։

96 ОИДР, т. III, էջ 189—193։

97 Նույն տեղում։

98 Ն. Հ ո վ ն ա թ ա ն, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 65։

Մետաքսամշակման զարգացման և կրանում հայերի մասնակցության մասին տեղեկություններ են տալիս հայ վաճառականների ու արդյունաբերողների՝ պետերբուրգցի Լուկա Շիրվանովի, աստրախանցի Բոգդանովի, մոսկվացիներ Սակարովների գործերը։ Աստրախանում և Կիզլյարում մետաքսի գործարան կառուցելու առաջարկությամբ ռուսական արքունիքին հղած խնդրագրում Մակարովները գրում են. «Անցյալում, 1720 թ. մեր պապ Սաֆար Վասիլևի խնդրագրի համաձայն նրան թույլատրվել էր Թերեքի վրա և կազակների քաղաքներում ստեղծել գործարաններ... ինչի մասին այն ժամանակ գրամոտա էր ուղարկվել Նազանի վոևվոդ Ապրակսինին։ Իսկ 1718 թ. մեր պապին տրված է բարձրագույն հրովարտակ՝ մետաքսի արտադրությունը բազմապատկելու մասին»։ Մոսկվացիները խնդրում են իրենց տրամադրել հողեր Աստրախանում և Կիզլյարի բերդի մոտերքը՝ ցորենի ու բամբակի ցանքսի համար, իսկ Աստրախանում՝ ստեղծել մետաքսի և բամբակամշակման գործարաններ (бумажные фабрики), ապա և դրանց համար թույլատրել Պարսկաստանից հումքի ներմուծել առանց մաքսի։ Այդ դիմումը հարգվել էր և դրեթե բոլոր պահանջները բավարարվել[99]։ Լուկա Շիրվանովին տրված արտոնությունները հաստատվեցին Ելիզավետա Պետրովնայի կողմից, 1741 թ. սեպտեմբերին[100]։ Նույն թվականի նոյեմբերի 11-ին նրան թույլատրվեց «վաճառականության համար կառուցել նավեր[101]։ 1773 թ. ծովային նավեր կառուցելու և դրանցով Կասպյան առևտուր անելու թույլտվություն է ստանում Աստրախանցի հայ Գրիգոր Կամպանովը[102]։ 1772 թ. թույլատրվեց վարձել գերմանացի լոցմաններ և այլ մասնագետներ[103], Սաֆարովին 1763 թ. այգիների համար տրվեց հողամաս և 10000 ռ. վարկ՝ առանց տոկոսի[104]։ Դժվար չէ նկատել, որ Աստրախանում, Մոսկվայում ապա նաև Պետերբուրգում արդեն XVIII դարի կեսերին ուժեղացող առևտրական բուրժուազիայի կողքին ստեղծվում է նաև արդյունաբերական բուրժուազիայի ջոկատ, որի հարստացումը կապված էր մեծ մասամբ վարձու բանվորական ուժի շահագործման հետ։ Կապիտալիստական զարգացման ճանապարհին կանգնած Ռուսաստանի տնտեսական կյանքի ոլորտի մեջ են մտնում նաև հայ մեծահարուստներ, որոնք կապված էին ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմտյան Եվրոպայի շուկաների հետ։ Ռուսական պետությունը ելնելով իր քաղաքական ու տնտեսական պլաններից շարունակում էր հայ բուրժուազիային օգնելու քաղաքականությունը, չնայած նրանց արտոնությունների դեմ ուղղված բողոքներին, որոնք պարբերաբար կրկնվում էին 1670-ական թվականներից սկսած[105]։ Ինչպես ընդհանրապես հայերի, այնպես էլ մասնավորապես Աստրախանցիներին տրված մենաշնորհումների դեմ բողոքում էին Մոսկվայի ու Աստրախանի ռուս

---

99 Այդ թղթի վրա, 1740 թ. 17/9-ին դրված է հետևյալ վճիռ-մակագրությունը. «Для шелкового завода и для сеяния пшена и хлопчатой бумаги места отвести и фабрику построить позволяется, шелк привозить из Персии три года беспошлинно, с краски и инструментов пошлин не брать, фабрики от постоя освободить». ПСЗ, т. XI, էջ 259։

100 Նույն տեղում, էջ 608։

101 Նույն տեղում, էջ 533։

102 ПСЗ, т. XVIII, стр. 1018.

103 ПСЗ, т. XIX, стр. 619.

104 ПСЗ, т. XVIII, стр. 387.

105 В. Воскаян, Новоторговый устав и договор с Армянской торговой компанией в 1667 г., «Известия» АН Арм. ССР, 1947, № 6.

վաճառականները և այլազգիները։ Այսպես, Բուխարայի խանը իր դեսպան Եղիազարի հետ ուղարկած նամակում բողոքում է, որ 1723 թ. Մարտիրոս Իվանովին Վոլինսկին տվել է Բուխարական, Գիլանի ու Նադրիժանի վաճառատներում, Կալմակական սլորոդաներում և յուրտերում սպիտակ բյազը ներկելու գործը։ Այնուհետև նշում է, որ «1705 թ. Բուխարցիները Աստրախանում ամեն տեսակի ապրանքներ կարող էին ներկել, իսկ այժմ մի հայ այն կապալով է վերցրել»[106]։ Կապիտալիստական կոնկուրենցիան իր նախնական ձևերով արդեն արտահայտվում էր Աստրախանում 18-րդ դարում, սակայն այն չէր կարող արմատականորեն փոխել ռուսական պետության քաղաքականության հիմնական գծերը։ 18-րդ դարի 20—30 թթ. Ռուսաստանում ստեղծվում են նոր գաղթավայրեր Կիզլյարում, Մոզդոկում, Սուրբ խաչում, մեծանում և ուժեղանում են հայ գաղութները Մոսկվայում և Աստրախանում[107], նշանակալի դեր խաղալով հայ ժողովրդի պատմության մեջ[108]։ Բավական է հիշել Ի. Օրու և Մինաս Վարդապետի կապը մոսկվացիների և աստրախանցիների հետ, Օրու դեսպանությունը, Պետրոս 1-ի Պարսկական արշավանքը և հայ ժողովրդի տասնամյա պայքարը Թուրքիայի ու Պարսկաստանի նվաճողական ձգտումների դեմ, Մինաս Վարդապետի, Իվան Կարապետի, Լուկա Շիրվանովի, Ավան Յուզբաշու, Գրիգոր Ստեպանովի, Դավիթ Նազարովի գործունեությունը՝ կապված Մոսկվայի և Աստրախանի ռուս և վրացի գործիչների հետ։

Մոսկվայի և Աստրախանի գաղութների պատմությունը՝ հայ-ռուսական կապերի և նրանց պատմական դերի կոնկրետ արտահայտությունն է, որը ներկայացնում է դրանց պրոգրեսիվ նշանակությունը հայ ժողովրդի կյանքում։

Ռուսաստանի հայ գաղթավայրերի դերը նշանակալի է դառնում հատկապես 18-րդ դ. 20-ական թվականներից հետո, բայց այդ շրջանի մասին մենք չենք խոսում, քանի որ այն հանդամանորեն ուսումնասիրված է ու շարադրված Ա. Յուխտի, Վ. Խաչատրյանի և Ֆ. Գ. Պողոսյանի ուշագրավ դիսերտացիաներում և հրատարակված հոդվածներում։

---

106 Դեսպանը խնդրում է հային զրկել այդ արտոնությունից, քանի որ անցյալում «Того откупа не было, и дабы... откупщику от того отказать». ЦГАДА, ф. Бухарские и Хивинские дела, 1728 г., д. б/п, л. 1—2.

107 Աստրախանի հայ գաղութը հետևողականորեն մեծանում էր, թեպետ բնակչության աճին խանգարում էին անբարենպաստ կլիման, քաղաքի անապահովությունը, հրդեհներն ու համաճարակները։ Այսպես, 1692 թ. 5 ամիս շարունակվող համաճարակի զոհ դարձան 10000 աստրախանցի և 5000 նկվոր։ 1709 թ. հրդեհը ոչնչացրեց 570 տուն։ 1728 թ. սոսկալի ժանտախտից զոհվեցին հազարավոր մարդիկ, մյուսները արտաբսվեցին քաղաքից։

108 Այդ սեը միայն տարերային չէր, դրան նպաստում էին ինչպես ռուսական արքունիքը, այնպես և հայ ազատագրական շարժման գործիչները։ Այսպես, օրինակ, Մինաս վարդապետը 1722 թ. արտաքին գործոց կոլեգիայում խնդրում էր հայերի համար ստեղծել բարենպաստ պայմաններ, որպեսզի շատերը գան Ռուսաստան։ «Множество их арм. народу в российское государство для житя придут, как из персидской, турецкой, так и с польской земель, и от того де его IIм. в-у превеликая будет прибыль и распространение всяких заводов и купечества, и великие слободы могут поселитца вскоре...» (ЦГАДА, ф. 100, 1722 г., № 2, л. 1 об.).

В. К. ВОСКАНЯН

К ИСТОРИИ ВОЗНИКНОВЕНИЯ АРМЯНСКИХ ПОСЕЛЕНИЙ РОССИИ

Резюме

Армянские поселения или колонии возникли в различных частях света еще в средние века. Процесс переселенческого движения и образования армянских поселений резко усилился в период сельджукских и татаро-монгольских завоеваний, упадка армянской государственности и многовекового господства турецко-персидских поработителей. Огромные массы армян в течение веков покидали Родину, искали спасения на чужбине, развивая там свою самобытную культуру.

История армянских колоний является неотъемлемой частью истории армянского народа. Особый интерес представляет история армянских поселений России—Астрахани, Москвы, Петербурга, Новой-Нахичевани (Ростов на Дону), ставших важным фактором укрепления политических и культурных связей армянского и русского народов.

Если история армянских колоний в Киевской Руси более или менее разработана, то история колоний в России XV—XIX вв. только сейчас становится предметом исследования.

В исторических источниках встречаются упоминания о пребывании армян в Поволжье и в русских городах еще с X—XII вв. и в период татаро-монгольского господства в XIII—XV вв. Однако более тесные связи между волжскими городами и Кавказом устанавливаются позже, после присоединения Казани и Астрахани к России. Укрепление русского централизованного государства в XVII в., улучшение отношений между Россией и Персией, заключение торгового договора с армянской компанией способствовали росту и формированию колоний, приобретших в дальнейшем важное экономическое и политическое значение. Этому содействовали дальновидные государственные деятели России, и особенно Петр I, наделившие армянских колонистов рядом прав и привилегий.

Большой подъем армянских колоний мы наблюдаем после 20-х годов XVIII века, в период освободительной борьбы народов Закавказья. Но мы не затрагиваем вопросов этого периода, так как они довольно хорошо освещены в диссертациях и статьях А. И. Юхта, Ф. Г. Погосяна и В. А. Хачатуряна.

Собранные нами сведения отрывочны, фрагментарны, но тем не менее они дают некоторое представление не только о продолжительном и сложном процессе становления армянских колоний, но и о их роли в истории развития армяно-русских отношений, в истории экономической, политической и культурной жизни армянского народа вообще.